

## ՔԱՂՎԱԾՔ

### «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2024 թվականի հունիսի 24-ի՝ հարցման կարգով նիստի N 12 արձանագրությունից

**ԼՍԵՑԻՆ.-** Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի պրոֆեսոր,  
ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր **Մաքսիմ Հրաչի  
Մուրադյանի «Բարձրագույն մաթեմատիկա տնտեսագետների համար,  
մաս 2» ուսումնական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու**  
մասին հարցը:

Հրատարակության ներկայացված ուսումնական ձեռնարկը հեղինակի 2019 թվականին հրատարակված «Բարձրագույն մաթեմատիկա տնտեսագետների համար» դասագրքի շարունակությունն է: Այն ունի կարևոր գործնական նշանակություն և նախատեսված է ՀՊՏՀ «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» կրթական ծրագրում ներառված «Մաթեմատիկական անալիզ-2» և «Մաթեմատիկայի ընտրովի գլուխներ» առարկաների դասավանդման համար: Ձեռնարկը կազմված է չորս բաժիններից: Առաջին բաժնում ներկայացված են շատ փոփոխականի ֆունկցիաների ազատ և պայմանական էքստրեմումի խնդիրների լուծման ալգորիթմները: Զգալի տեղ է հատկացված համեմատական ստատիկայի տարրերին: Երկրորդ բաժնում հանգամանալից ներկայացված են անդրադարձ հավասարումների և համակարգերի հետազոտման և լուծման մեթոդները: Երրորդ բաժնում ներկայացված են գծային և ոչ գծային դիֆերենցիալ հավասարումների և համակարգերի լուծման մեթոդները, քննարկված են ստացիոնար լուծումների կայունության հարցերը: Չորրորդ բաժինը նվիրված է վարիացիոն հաշվի և օպտիմալ կառավարման հիմունքներին: Որոշ կիրառական խնդիրների դեպքում ներկայացված է Պոնտրյագինի մաքսիմումի սկզբունքը: Ամենուրեք, մաթեմատիկական զարգացումներին զուգահեռ, քննարկված են բազմաթիվ տնտեսագիտական օրինակներ, մեկնաբանություններ և կիրառություններ: Ձեռնարկը միաժամանակ կարող է լիարժեք ծառայել նաև որպես խնդրագիրք, այն պարունակում է հարյուրավոր խնդիրներ և վարժություններ, որոնց զգալի մասն ունի տնտեսագիտական բովանդակություն:

Ուսումնական ձեռնարկն ուղարկվել է 2 արտաքին անանուն («կույր») գրախոսության և 2 գրախոս փորձագետների կողմից ստացվել են դրական եզրակացություններ:

Ուսումնական ձեռնարկի վերաբերյալ ստացվել են նաև երկու արտաքին և մեկ ներքին գրախոսների դրական կարծիքներ:

1. Աղավարդ Խաչատուրի Խաչատրյան՝ Հայաստանի ազգային ազրարային համալսարանի բարձրագույն մաթեմատիկայի, ֆիզիկայի և կիրառական մեխանիկայի ամբիոնի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

2. Վասակ Հովհաննեսի Թորոյան՝ Երևանի պետական համալսարանի ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր:

3. Միեր Լենսերի Աղալովյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր:

Հրատարակության ներկայացված ուսումնական ձեռնարկը շարադրված է գրագետ մայրենի լեզվով, մաթեմատիկական պատշաճ մակարդակով, բազմաթիվ տնտեսագիտական մեջբերումներով և կիրառական օրինակներով: Բացի տնտեսագիտական մասնագիտություններից այն կարող է օգտագործվել նաև բնագիտական, տեխնիկական, սոցիոլոգիայի, կենսաբանության, գյուղատնտեսական և այլ ֆակուլտետներում:

Ուսումնական ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի 2024 թվականի մարտի 28-ի նիստում (արձանագրություն N 5) և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 20-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 34):

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հիմք ընդունելով 2 արտաքին անանուն («կոյր») գրախոս փորձագետների դրական եզրակացությունները, երկու արտաքին և մեկ ներքին գրախոսների դրական կարծիքները, բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր **Մաքսիմ Հրաչի Մուրադյանի «Բարձրագույն մաթեմատիկա տնտեսագետների համար, մաս 2» ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության՝ 150 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում** (նախատեսված է հրատարակչության տարեկան թեմատիկ պլանով):

Սահմանված ժամկետում (ժամը 9:00-ից մինչև 17:30-ն ընկած ժամանակահատվածում) հարցման կարգով նիստի օրակարգային հարցի քննարկմանն ու քվեարկությանը գիտական խորհրդի 60 անդամից մասնակցեցին 54-ը: Քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գիտական խորհրդի քարտուղար՝

2024 թ. հունիսի 24  
Երևան

